Լոս Անջելեսի Շրջանի չափահասների տուբերկուլյոզի (TB) ռիսկի գնահատում

- Օգտագործեք տուբերկուլյոզի վարակի հետազոտման այս գործիքը՝ ախտանիշներ չունեցող **չափահասներին** հայտնաբերելու համար
- Կրկնակի թեստավորում պետք է անել միայն այն անձնանց դեպքում, որոնց թեստի պատասխանը նախկինում բացասական է եղել և վերջին քննությունից հետո ունեն **նոր** վտանգի գործոններ
- Տուբերկուլյոզի ախտանիշների կամ կրծքավանդակի ռենտգենի ոչ նորմալ արդյունքի դեպքում, որոնք համապատասխանում են տուբերկուլյոզի ակտիվ հիվանդությանը → Զննել տուբերկուլյոզի ակտիվ հիվանդության համար

Ակտիվ տուբերկուլյոի հիվանդության ամբողջական գնահատումը ներառում է՝ ախտանիշների ստուգում, կրծքավանդակի ռենտգեն և, եթե ցուցված է, խորխի AFB քսուք, կուլտուրաներ և նուկլեինաթթվի ուժեղացման թեստ (NAAT): Բացասական տուբերկուլինի մաշկի թեստը կամ ինտերֆերոնի գամմա ազատման անալիզը չի բացառում ակտիվ տուբերկուլյոզի հիվանդությունը:

Ստորև նշեք համապատասխան վտանգի գործոնների վանդակները

Տուբերկուլյոզ վարակի թեստը խորհուրդ է տրվում, եթե ստորև նշված 4 վանդակներից որևէ մեկը նշված է:

Եթե տուբերկուլյոզ վարակի թեստի արդյունքը դրական է և տուբերկուլյոզի ակտիվ հիվանդությունը բացառվում է, խորհուրդ է տրվում տուբերկուլյոզի վարակի բուժում:

☐ **Ծնունդ, ճամփորդություն կամ բնակություն** առնվազն 1 ամսով այն երկրներում, որոնք ունեն տուբերկուլյոզի բարձր ցուցանիշ

- Ներառում է բոլոր երկրները, բացի Միացյալ Նահանգներից, Կանադայից, Ավստրալիայից, Նոր Զելանդիայից և Արևմտյան ու Հյուսիսային Եվրոպայի երկրներից
- Եթե միջոցները պահանջում են առաջնահերթություն սահմանել այս խմբի մեջ, առաջնահերթությունը տվեք այն բուժառուներին, որոնք հիվանդության զարգացման համար ունեն առնվազն մեկ բժշկական վտանգ (ցանկը տե՛ս «Փաստերի թերթիկում»)
- Գամմա-ինտերֆերոնի արտազատման փորձը (IGRA) նախընտրելի է տուբերկուլինի մաշկի թեստից ԱՄՆ-ից դուրս ծնված ≥ 2 տարեկան անձանց դեպքում:

☐ **Իմունային համակարգի ճնշում՝** ներկա կամ նախատեսված

- ՄԻԱՎ վարակ ունեցող, օրգանի փոխպատվաստում ստացող, ուռուցքի մեռուկացման գործոն-ալֆա արգելափակիչով՝ TNF-alpha (օրինակ՝ infliximab, etanercept և այլն), պրեդնիզոլոնին համարժեք ստերոիդներով ≥15 մգ/օր ≥1 ամիս) կամ իմունային համակարգը ճնշող այլ դեղամիջոցներով բուժվող:

☐ **Սերտ շփում տուբերկուլյոզի** վարակիչ հիվանդություն ունեցող որևէ մեկի հետ՝ որևէ ժամանակ

- Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնը նշում է, որ շփում ունեցած անձանց գնահատումը և վարակված անձանց բուժումը տուբերկուլյոզի վերացման ԱՄՆ ռազմավարության կարևոր բաղադրիչն է:

☐ **Անօթևանության և բանտարկության պատմություն**

- ԱՄՆ-ի Կանխարգելիչ Ծառայության Աշխատանքային Խումբը (USPSTF) խորհուրդ է տալիս հետազոտել տուբերկուլյոզի վարակի բարձր ռիսկ ունեցող բնակչությանը՝ ելնելով վարակակրի հետ շփված լինելու բարձր հավանականությունից, ներառյալ այն մարդկանց, ովքեր ապրել են վարակը փոխանցելու բարձր վտանգավորություն ունեցող միջավայրերում (օրինակ՝ անօթևանների կացարաններում և ուղղիչ հաստատություններում):

☐ Ոչ մեկը.տուբերկուլյոզի ոչ մի թեստավորում այս պահին նշված չէ

Մատակարար՝ _____

Գնահատման ամսաթիվ՝ _____

Բուժառուի անուն՝ _____

Ծննդյան ամսաթիվ՝ _____

(Նշանը փակցրեք այստեղ, եթե կիրառելի է)

Տես **«Լոս Անջելեսի Շրջանի չափահասների տուբերկուլյոզի ռիսկի գնահատման ուղեցույցը»՝** այս գործիքն օգտագործելու մասին հավելյալ տեղեկությունների համար

Մշակված է Լոս Անջելեսի Շրջանի օգտագործման համար՝ հիմնվելով «Կալիֆորնիայի տուբերկուլյոզի ռիսկի գնահատում»-ի վրա, որը հասանելի է www.ctca.org կայքի PROVIDERS (մատակարարներ) էջում:

Համոզվելու համար, որ ունեք ամենաթարմ տարբերակը՝ այցելեք http://publichealth.lacounty.gov/tb/providertoolkit.htm

CTCA California Tuberculosis Controllers Association · CDPH California Department of PublicHealth · Curry International Tuberculosis Center · County of Los Angeles California · County of Los Angeles Public Health